

ք.Եղեգնաձոր

29.05.2019թ.

**ՉՈՎԱԾ ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԴԱՐՁԱԾ ԶԻՆ. ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ  
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾԱՎԱԾ  
ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁԱՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

Նիստի աշխատանքներին մասնակցում են՝ փոխմարզպետ, հանձնաժողովի նախագահ Ռ.Տոնոյանը և հանձնաժողովի անդամները: Հրավիրված են ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Վ.Խուրդավերդյանը, Եղեգնաձորի համայնքապետարանի գլխավոր մասնագետ, իրավաբան Լ.Մարտիրոսյանը:

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ**

1. ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 6-ի N 1419 որոշումը /ներկ. Ց Բաբայան/:
  2. Զառիթափի համայնքի Նոր Ազնաբերդ բնակավայրի բնակիչ, 3-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայող Մարտունիկ Հարությունյանին բնակարանային հաշվառումից հանելու վերաբերյալ Զառիթափի համայնքի ղեկավարի որոշումը /ներկ. Շ. Ազատյան/:
  3. ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի 2 -րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայող, Զառիթափի համայնքի Մարտիրոս բնակավայրի բնակիչ Արսեն Մաթևոսյանի բնակարանային գործը/ներկ. Շ.Ազատյան/:
- Լսեցին՝ Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 6-ի N 1419 որոշումը:


Հանձնաժողովի անդամ Շ.Ազատյանը ներկայացրեց Զառիթափի համայնքի ղեկավարի 27.05.2019թ. թիվ 54 որոշումը, որով ուժը կորցրած է ճանաչվել Զառիթափի համայնքի ղեկավարի 24.01.2019թ. N6 որոշումը՝ Մարտունիկ Հարությունյանին բնակարանաի կարիքավոր ճանաչելու վերաբերյալ:

Շ Ազատյանը ներկայացրեց նաև ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի 2 -րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայող, Զառիթափի համայնքի Մարտիրոս բնակավայրի բնակիչ Արսեն Մաթևոսյանի բնակարանային գործը և նշեց որ, դիմողի բնակարանը 4-րդ աստիճանի վթարային է , սակայն եզրակացությունը տրվել է մի քանի տների համար միասին ինչը վիճահարույց է և լրացուցիչ քննարկման առարկա:

## Հանձնաժողովը որոշեց՝

1. Հիմք ընդունելով Ջառիթափի համայնքի ղեկավարի 27.05.2019թ. թիվ 54 որոշումը Նոր Ազնաբերդ բնակավայրի բնակիչ, 3-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայող Մարտունիկ Հարությունյանին հանել ՀՀ Վայոց ձորի մարզի հերթացուցակից և տեղեկատվություն ներկայացնել ՀՀ ՊՆ :
2. ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի 2 -րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայող, Ջառիթափ համայնքի Մարտիրոս բնակավայրի բնակիչ Արսեն Մաթևոսյանի գործը կազմել ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 6-ի N 1419 որոշման դրույթներին համապատասխան և ներկայացնել հանձնաժողովի քննարկմանը:
3. ՀՀ կառավարության 2005թ. հունիսի 9-ի 947-Ն և 2017թ. օգոստոսի 10-ի N 1016-Ն որոշումներով հերթագրված զինծառայողների բնակարանային գործերը ուսումնասիրել և համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 6-ի N 1419 որոշմանը, անհրաժեշտության դեպքում կատարել տնային այցելություն՝ բնակարանային պայամանները ստուգելու համար:
4. ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 6-ի N 1419 որոշումը ուղարկել մարզի համանքներին՝ ի կատարումն:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ.Տոնոյան

Քարտուղար



Յ.Քարայան